ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-010-31.05.2017-ՊԻՄԻ-011/0) ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1	Պատգամավոր Հրայր Թովմասյան	Նախագծերի փաթեթ	Նախագծերի փաթեթը համապատասխանեցնել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասին, 2-րդ մասի «ա» կետին և 3-րդ մասին, ըստ որոնց՝ նաև հարկադիր կատարողի վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է Հայաստանի Հանրապետությունը, իսկ վնասի հատուցումը կատարվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:	Ընդունվել է: Կհստակեցվեն «արտաբյուջե», «պահուստային ֆոնդ» եզրույթները:
2	Պատգամավորներ Արփինե Հովհաննիսյան, Ռուստամ Մախմուդյան	Հոդված 1	«7. Կատարողական գործողությունների կատարման ծախսերը փոխանցվում են դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման եւ համակարգի զարգացման ֆոնդ, որում գոյացած միջոցներն օգտագործվում են կատարողական ծախսերի, հարկադիր կատարողի վարչարարության հետեւանքով պատճառված վնասի փոխհատուցման, համակարգի զարգացման եւ	Ընդունվել է:

			ծառայողների նյութական խրախուսման, ինչպես նաեւ սույն մասի 3-րդ պարբերությունում նշված դեպքում հարկադիր կատարողի վարչարարության հետեւանքով պատճառված վնասի հատուցմանն ուղղված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների վերականգնման համար, ինչպես նաև ապահովելու համար վարչարարության հետևանքով կայացված վարչական և դատական ակտերով սահմանված ֆիզիկական և իրավաբանական անձանց վճարումները:	
3	Պատգամավորներ Արփինե Հովհաննիսյան, Ռուստամ Մախմուդյան	Հոդված 2	***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին հարկադիր կատարողի վարչարարության հետևանքով պատճառված վնասը հատուցելու մասին այն բոլոր դատական ակտերը, որոնք օրինական ուժի մեջ են մտել 2014թ. հունիսի 1-ից ենթական են կատարման դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի հաշ-վին:~~Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին առկա հարկադիր կատարողի վարչարարության հետեւանքով պատճառված վնասը հատուցելու մասին օրինական ուժ ստացած դատական ակտերը ենթակա են կատարման դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման եւ համակարգի զարգացման ֆոնդի հաշվին~~:	Ընդունվել է («դատական» բառը հանած):